կոտոր են լինում նրանց արդար իրաւունքը պաշտպանելու համար. բայց երբ նոյն այդ պահանջը Անատոլիայի քուրդն է ներկայացնում Թիւրքիային՝ բոլշեւիկները դիւային քրքիջով են դիտում այն դաղանութիւնները, որ կատարում է Թիւրքիան՝ քրդերի ինքնորոշման իրաւունքը ոչնչացնելու համար...

Այսպիսով, դեմոկրատական հաշտութեան նշանաբանը երրորդ կէտի մէջ եւս սրնանկ դուրս եկաւ. նրանց կնքած հաշտութիւնը եղաւ ոչ թէ համաձայն ազգերի ինքնորոշման իրաւունքի, այլ հակառակ այդ իրաւունքի:

* * *

Արտաքին յարաբերութիւնների կարգաւորման խնդրին ձեռնարկեցին բոլշեւիկները հոկտեմբերեան յեղաշրջման երկրորդ թէ երրորդ օրը: Մինչդեռ նրանք պատրաստ էին Ռուսաստանի անմիջական թշնամիների՝ Գերմանիայի, Աւստրիայի, Թիւրքիայի եւ Բուլգարիայի կառավարութիւնների հետ դաշնագիր կնքել այդ կառավարութիւնները ճանաչելու պայմանով՝ Դաշնակից կառավարութիւնների հետ խօսելու մասին լսել իսկ չէին ուզում: Դրա համար էլ հրապարակային կոչերով դիմեցին բոլոր ժողովուրդներին, յայտնելով իրենց իշխանութեան գոյութեան մասին, խնդրեցին որ ճանաչեն այդ գոյութիւնը, յորդորեցին, որ նրանք, իրենց կառավարութիւնների գլխի վրայով յարաբերութիւններ հաստատեն Խորհրդային հանրապետութեան հետ, եւն., եւն... Դիմեցին եւ սպասեցին երկա՞ր, երկա՞ր ամիսներ...

Ժողովրդների լռութիւնը դաս է ոչ միայն արքայական բռնակալների համար, ինչպէս հաւատացնում էր Միրաբոն, այլ եւ յեղափոխական բռնակալների համար: Այն քար լռութիւնը, որով քաղաքակիրթ ժողովրդները պատասխանեցին Փետրուարեան Յեղափոխութեան դահիճների կոչին՝ զգալ տուեց վերջիններիս, որ իրենց հրաւէրը սխալ հասցէի է ուղղուած...

Այս առաջին անյաջողութիւնը բաւական էր, որպէսզի բոլշեւիկները, հրապարակօրէն յետ լիզելով իրենց թքածը, բաղխէին բուրժուական կառավարութիւնների դռները: Եւ ինչե՞ր չէին անում նրանք, որպէսզի այս կառավարութիւնները բանան փակած դռները Խորհրդային իշխանութեան առաջ. ի՞նչ խոստումներ, ի՞նչ յանձնառութիւններ, ի՞նչ նախասենեակային սպասումներ...

Եթէ չենք սխալւում, փոքրիկ Էստոնիան էր, որ բոլշեւիկեան հորդաներին դուրս քշելուց յետոյ՝ հաշտութեան դաշնագիր կնքեց նրանց հետ, եւ այսպիսով, առաջին պետութիւնը լինելով, ճանաչեց Ռուսաստանի Խորհրդային իշխանութիւնը: Բոլշեւիկների հրճուանքին չափ չկար: Վերջապէս բացուեց «առաջին պատուհանը» — յուսադրում էր Լենինը Խորհուրդների Համագումարի չուարած անդամներին:

«Խորհրդային Ռուսաստանի բլոկատը ճեղքուած է արդէն»— արձագանգում էին նրա հետեւողները՝ մոռանալով, որ իրենց ճանաչողը, իրենց հետ պաշտօնական յարաբերութիւններ հաստատողը էստոնական ժողովուրդը չէ, այլ նրա բուրժուական կառավարութիւնը...

Այս մոռացումը ամենաարդահատելի ձեւով հանդէս եկաւ մանաւորապէս ռուս-իտալական դիւանագիտական յարաբերութիւնների վերահաստատման ժամանակ: Այդ օրերին Իտալիայում Մուսոլինին էր իշխում: Նրա սեւ շապիկաւորները ահ ու սարսափ էին տարածել ամբողջ երկրում՝ խեղդելով ժողովրդապետական ամէն մի սկզբունք եւ շարժում: Առանձնապէս ծանր էին նրանց հարուածները իտալական աշխատաւորութեան դէմ.— արհեստակցական եւ գործակցական ընկերութիւնները մահամերձ վիճակի էին մատնուած. ընկերվարական կուսակցութիւնները լուծուած, նրանց անդամներից շատերը բանտարկուած, բանուորական մամուլը կողպէքի տակ դրուած եւն., եւն.:

Իսկ ի՞նչ դրութեան մէջ էին գտնւում այդ դժնդակ օրերին իտալական կոմունիստները: — Կատարեալ անտանական դրութեան մէջ: Ֆաշիստները չէին դոհանում նրանց սովորական հալածանքների ենթարկելով, այլ ձեռք ձգած կոմունիստներին, նախ քան որեւէ պատժի դատապարտելը, «ձիու դոզայով» լուծողական էին խմացնում, որպէսզի նրանք նա-